

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Սիրիայի Արաբական Հանրապետության ներքին գործերի նախարարության միջև իրենց իրավասության հարցերին վերաբերող համագործակցության մասին

Նախաբան

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը և Սիրիայի Արաբական Հանրապետության ներքին գործերի նախարարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր, հիմնվելով իրենց միջև գոյություն ունեցող բարեկամական և ավանդական հարաբերությունների վրա և ցանկանալով համագործակցություն հաստատել իրենց միջև իրենց իրավասության հարցերի վերաբերյալ և հաշվի առնելով միջազգային համաձայնագրերն, ինչպես նաև երկու երկրներում գործող օրենքներն ու կանոնակարգերը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը կհամագործակցեն և միմյանց փոխադարձաբար կօգնեն, այդ թվում և փորձի փոխանակմամբ, հետևյալ բնագավառներում.

ա) պայքար թմրանյութերի առևտրի և հոգեներգործող նյութերի անօրինական արտադրության և օգտագործման դեմ,

բ) պայքար կազմակերպված հանցագործության դեմ.

1. պայքար զենքի, զինամթերքի և պայթուցիկ նյութերի մաքսանենգության դեմ,

2. պայքար արժույթները, արժեք ներկայացնող այլ փաստաթղթերը և թղթադրամները կեղծելու ու նենգափոխելու դեմ,

3. պայքար պատմական և մշակութային արժեք ներկայացնող առարկաների, հույժային քարերի ու արժեքավոր նյութերի և այլ արժեքավոր առարկաների մաքսանենգության դեմ,

4. պայքար միջազգային անօրինական տնտեսական գործունեության դեմ,

զ) պայքար միջազգային ահաբեկչության դեմ՝ զանազանելով այն ժողովուրդների՝ հանուն ազատության և անկախության մղվող պայքարից,

դ) փորձի և մտքերի փոխանակում անվտանգության ու հասարակական կարգի պահպանման մեթոդների և եղանակների բարելավման համար,

ե) պայքար սահմանն անօրինական անցնելու դեմ,

զ) համագործակցություն անձնակազմի որակավորման և մասնագետների ուսուցման ասպարեզում:

Հոդված 2

Երկու կողմերի միջև համագործակցությունն իրականացվում է դիվանագիտական ճանապարհով՝ հետևյալ ուղղություններով.

ա) տեղեկության և փորձի փոխանակում առաջին հոդվածում հիշատակված բնագավառներում,

բ) փոխադարձ շահերի բնագավառում փաստաթղթերի, հրապարակումների և գիտական հետազոտությունների արդյունքների փոխանակում,

գ) փոխադարձ շահեր ներկայացնող միջոցառումների կազմակերպում և ձեռնարկում:

Հոդված 3

Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության իրականացման մանրամասն միջոցառումները պետք է սահմանվեն Պայմանավորվող կողմերի կողմից համաձայնեցվելիք գործնական ծրագրերում:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը, համաձայն իրենց երկրներում գործող օրենսդրությունների, երկու երկրների ներքին գործերի նախարարությունների խնդիրների համար փոխանակում են տեղեկություն:

Հոդված 5

Տեղեկությունը փոխանակվում է համաձայն Պայմանավորվող կողմերի երկրներում գործող օրենսդրությունների: Պայմանավորվող

Կողմերից յուրաքանչյուրը կարող է հրաժարվել որևէ տեղեկություն տրամադրելուց, եթե գտնում է, որ այն կարող է վնաս հասցնել իր ինքնիշխանությանը կամ ազգային անվտանգությանը կամ հակասում է երկրում գործող օրենսդրությանը: Մերժման մասին տեղեկացվում է գրավոր: Սույն Համաձայնագրի շրջանակներում ստացող Կողմը չի կարող տեղեկություն տրամադրել երրորդ կողմին առանց տեղեկատվություն տրամադրող Կողմի հետ նախնական համաձայնության:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը կհամագործակցեն՝ անցկացնելու փոխադարձ շահեր ներկայացնող գիտական ուսումնասիրություններ: Այդ նպատակով նրանք կուսումնասիրեն հատուկ տեխնիկական միջոցներով և սարքավորումներով տեղեկության հավաքման գործում փոխօգնության հնարավորությունը:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերը համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կազմակերպում են փորձագետների հանդիպումներ՝ նրանց մասնագիտական իրավասությունների շրջանակներում խիստ հրատապ և կարևոր խնդիրներ լուծելու համար:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով հանձնում են նոր ճամփորդական փաստաթղթերի, կնիքների ու ելքի վիզաների տեսակների նմուշները՝ անօրինական կերպով իրենց սահմաններն անցնելը կանխելու և դրա դեմ պայքարելու համար:

Հոդված 9

Կողմերից յուրաքանչյուրը, ելնելով ազգային անվտանգության կամ ներքին կարգ ու կանոնի շահերից, կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցնել սույն Համաձայնագրի կատարումը: Այդպիսի դադարեցման կամ դադարեցումը չեղյալ համարելու դեպքում պետք է դիվանագիտական ճանապարհով հաղորդվի Պայմանավորվող մյուս Կողմին՝ ցանկացած ժամանակ:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը գործում է մեկ տարվա ընթացքում և ինքնաբերաբար ամեն անգամ կերկարաձգվի նույն ժամկետով: Յուրաքանչյուր Կողմ կարող է ժամկետի լրանալուց նվազագույնը 30 օր առաջ մյուս Պայմանավորվող կողմին դիվանագիտական ճանապարհով գրավոր հայտնել Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում իրենց վավերացումը ծանուցող դիվանագիտական հայտագրերի փոխանակման պահից՝ համաձայն Պայմանավորվող կողմերի սահմանադրական ընթացակարգերի:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրը կազմվել է երեք բնօրինակով, հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր բնօրինակներն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի տեքստի մեկնաբանման անհամաձայնության դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

Կատարված է Ղամասկոս քաղաքում 1995 թվականի ապրիլի 30-ին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1995 թվականի օգոստոսի 6-ից: